Դ. ՏԱՐԻ ԹԻՒ 1121 — ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1887 — (Ն. Տ.) 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1887 — 24 ՄՈՒՀԱՐՐԻՄ 1305

20 ՓԱՐԱ (Ց'ՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԱՌԱՒԱԼ ԿԱՄ ՀԱՅ ԵՒ ԲԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ԲԵՐՎԻ.
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ԻՐԱՒԱՆՔՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵԼՅԱԼ ԱՌՆՈՒԹԵԱՆ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ԳՐԱԽՕՒԹԵԱՆ ԵՒ ՍՏԱՑՈՂՈՒԹԵԱՆ

20 ՓԱՐԱ (Ց'ՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ Հայոց Տարեկան	դահեկան արժէք	160
» » Վեցամսեայ	» »	80
» » Կուամսեայ	» »	40
Դուռառաց » եւ տեղւոյն		
Թղթատարով տարեկան	» »	240
Դուռառաց Հայոց եւ տեղւոյն		
Թղթատարով վեցամսեայ	» »	120
Օտար երկիրներ, տարեկան	ֆրանք	56
» » վեցամսեայ	»	28

Դուռս գրկուած լրատուաց համար ծախքը Տնօրէնութեան վրայ է. խմբագրութեանս գրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karaköy Deërmen Han à Constantinople

Կ. ՊՈԼԻՍ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1887

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՆԴԻՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵՑՔ

(ԹԱՅՄԶԻՆ ՎԻԵՆՆԱՅԻ ԹՂԹԱԿՑԷՆ)

Վիեննա, 4 Հոկտ.

«Պալքանեան Թերակղզւոյ երկաթուղիները բանեցնելու խնդիրն, (օրք քիչ օրէն պիտի միացուին՝ Պուլկարիոյ գծերուն առարտմամբ,) երկար բարակ բանակցութեանց նիւթ պիտի լինի։ Եւրոպիոյ Օսմ. երկաթուղիներն այժմ կը բանեցնէ աւստրեան ընկերութիւն մը, յորում Պառոն Հիրշ Գըլխաւոր ստացուածատէրն է։ Թուրքիոյ դիւրաղաձուութեան դպչող կէտ մ'եղած է միշտ որ Թուրքիոյ երկաթուղիները կը բանեցնէ աւստրեան ընկերութիւն մը։ Պառոն Հիրշ Օսմ. Կառավարութեան հետ ունի չկարգադրուած մեծամեծ հաշիւներ, զորս մաքրել կ'ուզէ, և առ այս հաստատելու համար Բ. Դուռն, քանիցս առաջարկեց, ուրիշ պայմաններէ զատ, իւր «Աւստրեան Շահագործման Ընկերութիւնը» փոխել Օսմանեան Ընկերութեան մը։ Բայց Բ. Դուռն ո՛չ միայն ընկերութեան փոխուիլը կ'ուզէր, այլ և Պառոն Հիրշի անոր մէջէն երթալն։ Իսկ Պառոն Հիրշ ցայս վայր կարող չէր եղած իւր տեղը բռնող դրամատէր մը, կամ դրամատերաց խմբակ մը գտնել։ Այս դժուարութեան պատճառն է Բ. Դրան հետ առկախ մնացած մեծագումար պահանջքի խնդիրը։ Վերջերս Պառոնը համոզեց միացման դիմերը շնոր սեղանաւորական խմբակին՝ Արեւելեան երկաթուղիները բանեցնելու համար կազմ գադրութեան մը գալու, Բ. Դրան հետ առնելիքի խնդրոյն լուծման պայմանաւ։ Այդ խմբակ կը պատրաստակէ Օսմ. Պանքան, Վիէննայի Լէնտեր Պանքն և Բարիզի Ռոնդուառ տ'Էսքոնդն, և 30 միլիոն ֆր. ունի, զոր կը հաւանի բարձրացնել 130 միլիոնի, և ստանձնել՝ իբրեւ օսմանեան ընկերութիւն մը՝ Կ. Պոլսոյ և Սելանիկի օսմանեան երկուց երկաթուղեաց պահպանումն և շահագործումն։

«Այս կարգադրութիւն ի գործ պիտի դրուի երբ Պառոն Հիրշ մաքրէ Թուրք Կառավարութեան հետ ունեցած հաշիւները։ Երկու կողմերն ալ մեծամեծ դժուարներ կը պահանջեն իրարմէ, որք երկուստեք անկարելի եղած է իրաւարարութեամբ համաձայնութիւն գոյացնել։ Ուստի, Պառոն Հիրշի յայտարարելը վերոյիշեալ սեղանաւորական խմբակին կողմէ առաջարկուեցաւ որ Բ. Դուռը դիմէ Անգլիոյ, Ֆրանսայի կամ Պելճիոյ Կառավարութեան, խնդրելով որ իրաւագէտ մը անուանի՝ մաքրելու այս հաշիւներ և երկուստեք օրինաւոր համեմատութեան մը վերածելու զայն։

«Անգամ մը որ այսպէս պարզուին հաշիւները, կարելի է վերջնական կարգադրման մը գալ բարեկամաբար, կամ իրաւաբարութեամբ։ Բ. Դրան համար սոյն առաջարկութեան հրապուրիչ կողմն այն է թէ իւր երկաթուղիները բանեցնելու համար այսուհետեւ Օսմանեան Ընկերութիւն մը կրնայ ունենալ առանց Պառոն Հիրշի, և խնդիր չի կրնար լինել վերոյիշեալ սեղանաւորական խմբակին սոյնպիսի Օսմանեան Ընկերութիւն մը կազմելու կատարեալ ձեռնհասութեան մասին։

«Բայց այս կարգադրութեան հաւանօրէն ծանր ընդդիմութիւն մը պիտի լինի Աւստրիոյ Հունգարիոյ կողմէ։ Աւստրեան Պետական Երկաթուղեաց Ընկերութիւնը միշտ յոյս կը տածէր իւր ձեռքն անցուցնելու Օսմ. Երկաթուղեաց շահագործումն, իսկ երբ այդ երկաթուղիք կ'անցնին ա՛նպիսի խմբակի մը ձեռքն յորում անգլիական եւ ֆրանսական շահերն առաւելակշռող են, յայտնի է թէ գործը չի յաջողիր աւստրո-հունգարական հայեացքներու։

«Ուրեմն, անհաւանական է որ Օսմ. Ընկերութեան մը հաստատման յատակագիծն իւր այժմեան ձեւով գործադրելի լինի, և միացման խնդիրը տակաւին ժամանակ մ'ելս անոյշ պիտի մնայ, մինչեւ որ հասկցուի թէ ո՛վ պիտի բանեցնէ միացեալ գիծերն։ Երկաթուղւոյ խնդիրը կը գտնուի բովանդակ Պալքանեան Թերակղզւոյ բաղաքականութեան ներքեւ, և թէպէտ շինելի բան քիչ մնացած է այժմ, շինուած գիծերը բանեցնելու վերաբերեալ խնդիրը ա՛նպիսի հակառակ շահեր կը յարուցանեն որ անոնց լուծումը ժամանակի կարօտ է դեռ։»

* * *

Վիեննա, 5 Հոկտ.

«Պալքանեան Երկաթուղիներն Օսմ. Ընկերութեան մը ձեռքով բանեցնելու մասին Պառոն Հիրշի ծրագրոյն նիւթ կատմամբ, կ'իմանամ թէ աւստրո-մաճառ Կառավարութիւնը բացարձակապէս պիտի հակառակի նոյն երկաթուղեաց այժմեան աւստրեան ընկերութեան կերպարանափոխութեան։ Պ. Թիսա որոշ յայտարարութիւններ բրած է այս մասին, և հրահանգներ զրկուած են աւստրո-մաճառ դեսպան Պառոն Քալիչէի ի Կ. Պոլիս՝ ծանուցանելու Բ. Դրան թէ Աւստրիա չպիտի հաւանի այնպիսի կարգադրութեան մը։

«Պառոն Հիրշի այժմեան առաջարկը ծանր պատահականութիւն մը կը թելադրէ, այսինքն թէ իւր ծպտեալ Օսմանեան Ընկերութիւն օր մը նոր գոյակոխութեամբ մը կրնայ Ռուսական Ընկերութիւն մը դառնալ։ Այս պատահականութիւն աւստրո-մաճառ քաղաքագէտներուն ուշադրութիւնը կը գրաւէ այնու մանաւանդ թէ Օսմանեան Ընկերութիւն մը կազմելու համար Պառոն Հիրշի առաջարկած սեղանաւորական խմբակին հոգոր տարբերէն մին (Բարիզի Ռոնդուառ տ'Էսքոնդը պէտք է լինի) ռուսական ազդեցութեան ենթակայ է յայտնապէս։ Քաղաքական իմաստով մը, Բ. Դրան շահուց լաւագոյնս կը համապատասխանէր կարգադրութիւն մը աւստրո-մաճառ Պետական Երկաթուղեաց Ընկերութեան հետ, և ի նկատ առնելով այդ Ընկերութեան տրամադրութեան ներքեւ գտնուած նիւթական մեծամեծ միջոցները, դժուար է տնտեսագիտական առարկութիւն մ'ընել այս կարգադրութեան։ Ռուսիա բնականապէս ամէն զօրութեամբ պիտի մաքառի որպէս կարգադրութեան դէմ. բայց Ռուսիոյ ազդեցութիւնը կրնայ հակակշռուիլ Անգլիոյ և Իտալիոյ ազդեցութեամբ, որք ետ պէտք չէ կենան այժ տալէ աւստրո-մաճառ ծրագրոյն, եթէ ապահովութիւնը տրուին թէ աւստրո-մաճառ Ընկերութիւնն ու Կառավարութիւնն Անգլիոյ և Աւստրիոյ առեւտրական շահուց հակառակ տարբերութիւններ ի գործ չպիտի դնեն սակագնոց մասին։»

* * *

Թ-ցի թղթակցին այս հեռագրէն կ'երեւի թէ Արեւելեան Երկաթուղիները բանեցնելու խնդիրը Թուրքիոյ համար առաջնակարգ կարեւորութիւն ունեցող քաղաքական խնդիր մը դարձած է այս միջոցիս։

Երկար ժամանակ իրարու հետ գործ ունենալէ յետոյ, կայս. Կառավարութիւնն և Պառոն Հիրշ իրարմէ ձանձրացած են, և կ'ուզեն իրենց հաշիւները մաքրելով դադրեցնել իրենց գործառնութիւն, թէ մին և թէ միւսն ուրեմն կը փնտռեն նոր Ընկերութիւն մը՝ Եւրոպական Թուրքիոյ արդի գիծերն և նոր շինուած գիծերը բանեցնելու համար։ Բ. Դուռը բնականապէս կը փափաքի որ արդի Աւստրեան Ընկերութեան տեղ Օսմանեան Ընկերութիւն մը կազմուի։ Բայց ճշգիւ ա՛յն պատճառաւ որ արդի Ընկերութիւնն աւստրեան է, Աւստրիոյ-Հունգարիոյ Կառավարութիւնը չընդունիր որ այդ Ընկերութիւն մը զրկուի աւստրիական մը կրէ։ Աւստրիա կը փափաքի որ բոլոր Արեւելեան Երկաթուղիք իւր ձեռաց մէջ գտնուին։ Եթէ ուրիշ Ընկերութիւն մը պիտի գտնուի, Աւստրիա կ'ուզէ որ առաւել ևս աւստրեան Ընկերութիւն մը լինի ան, —Աւստրիոյ-Մաճառստանի Պետական Երկաթուղեաց Ընկերութիւնն։ Ահա՛ քաղաքական մեծ խնդիր մը, որոյ քով անշնչան կը մնայ Պառոն Հիրշի մեծագումար պահանջմանց լոկ դրամական խնդիրն, ո՛րչափ ևս ինքնին մեծ խնդիր մը լինի ան ալ։ Այս քաղաքական խնդրոյ մէջ տարբեր շահեր ունին Թուրքիա, Ռուսիա, Աւստրիա-Հունգարիա, Անգլիա և Իտալիա։ Ամենքն ալ կը զգան թէ Պալքանեան Թերակղզւոյ Երկաթուղիներն իւր ձեռաց մէջ ունեցող Տէրութիւնն ազդեցութեան առաւելակշռութիւն պիտի ունենայ այդ երկրի մէջ։ Զայս քաջ զգալով է այժմ որ կայս. Կառավարութիւնն Ասիական Թուրքիոյ Երկաթուղիները լոկ Օսմանեան Ընկերութիւն մը կ'ուզէ յանձնել, թէև բաղկացած լինի օտար դրամատէրներէ։ Այս մասին կայս. Կառավարութեան որոշումն յոյժ գովելի է։ Բայց Եւրոպական Թուրքիոյ Երկաթուղեաց օտար ընկերութեան մը ձեռքն և օտար Տէրութեան մը ազդեցութեան ներքեւ գտնուելն երկրին ապագային համար կը յարուցանէ քաղաքական կարեւոր դժուարութիւն մը, զոր կը մաղթենք որ իւր բոլոր իմաստութեամբ և քաղաքագիտութեամբ յաջողապէս կարենայ լուծել Բ. Դուռը։

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Պուլկարիոյ ընդդիմադիր կուսակցութիւնը բողոք մ'ուղղեց Մեծ Տէրութեանց, «որք Պերլինի Դաշնագրով երաշխաւորած են պուլկար ազգին գոյութիւնն՝ յետ նորա փրկութեան իւր անդրանիկ եղբօր (Ռուսիոյ) ձեռամբ»։ «Պուլկար ժողովուրդն որ կը բողոքէ՝ չէ այն որոյ զգացումները ներկայացնել կը յաւակնի ապօրէն և բռնակալ կառավարութիւն մը։ այլ ճշմարիտ պուլկար ժողովուրդն է՝ որ կը բարձրացնէ իւր ճշնչեալ ձայն՝ յայտնելու համար իւր գանգատներ ապ մը մարդկան դէմ, որք կը հարստահարեն զինք, և կորստեան անդունդին եզրն հասուցած են զինք արդէն։» Ընդդիմադիր կուսակցութիւնը կը բողոքէ առաջիկայ ընտրութեանց դէմ, յիշելով կարգ մը ապօրինութիւններ զորս գործեր են այս «ապ մը մարդիկ», սկսեալ Ալէքսանդր Իշխանին օրէն։ Անկէ ի վեր ընտրութիւնք ազատ չեն եղած երբեք։ Կառավարութիւնն իւր կուսակիցներով ու ոստիկաններով կը պաշարէր քուէարկութեան վայրերն, և գանակոծել կուտար ամէն ընդդիմադիրներն որք կը համարձակէին ներկայանալ քուէարկութեան։ Շատ տեղեր այս պատճառաւ մեծ անկարգութիւնք ծագեցան։ Նոյն ճնշման ներքեւ ընտրուեցաւ Մեծ Սոպրանյէն, և անոր պատուոյ եղող Ֆերտինանտ Իշխան յարած է [illegible] դրութեան, ինչպէս աշխարհաբար գովեստ կարդաց այն մարդոց որք քարկոծեր էին Պ. Քաբաֆէլովի տունն և նորա լրագրոյն տպարանը խորտակեր։

«Այս նոր հրոսապետս՝ Քոպուրկի Իշխանին հրամանաց ներքեւ գտնուող ինքնակոչ կառավարութիւնն, եւրոպեան հանրային կարծեաց համարումը շահելու և կարծեցնելու համար թէ իրօք ներկայացուցիչ է պուլկար ազգին, ընտրողները կը հրաւիրէ երեսփոխաններ ընտրելու Սոպրանյէին։ Իբր թէ պաշարման վիճակը կամ զինուորական օրէնքը (Խռրէյէ եէ՝ֆէյէ) վերցած է։ Բայց իրեն անձնուէր Սոպրանյէ մ'ընտրել տալու համար, այս կառավարութիւն յարմարագոյն դատած միջոցները ձեռք կ'առնու։

«Պաշարման վիճակը վերցած է. բայց իրօք անոր տեղ դրուած է Ֆերտինանտ Իշխանին բռնութիւնը։ Սորա գաղն ի փոանգի է։ ուստի, ամէն միջոցներ պատչաճ կը դատուին որպէս զի Ֆերտինանտ Իշխան կարենայ կանգուն մնալ հակառակ ազգային կամաց, հակառակ Եւրոպիոյ, և յանարգանս դաշնագրաց։

«Պաշարման վիճակը վերցած է. բայց ներքին գործոց նախարարն, իւր սեպտ. 21-ի շրջաբերականաւ, ամէն տպագրիչներու կ'արգիլէ տպել քաղաքական նիւթոց վրայ ճառող լրագրեր, պարբերականներ ու տետրակներ, ի բաց առեալ կառավարական լրագրերը։

«Պաշարման վիճակը վերցած է, բայց նամակներն ու հեռագրերը կը բացուին ու կը կարդացուին կառավարական գրաքննիչներու կողմէ, առաջուան պէս։

«Պաշարման վիճակը վերցած է. բայց կառավարութիւնը զորք կը ղրկէ ամէն ընտրական կեդրոնները։

«Պաշարման վիճակը վերցած է. բայց կառավարութիւնը գաղտնապէս ձերբակալել կուտայ ընդդիմադիր կուսակցութեան երեւելի մարդիկը, կը թշնամանէ, կ'արտաքսէ կամ կ'արգիլէ զանոնք։»

Բողոքարկուած կը յայտարարեն ի վերջոյ. «Ճշմարիտ պուլկար ժողովուրդը չի կրնար պատասխանել այդպիսի կառավարութեան մը հրաւէրին։ Զի կրնար համաձայնիլ այնպիսի մարդոց հետ որք, զերեզմանը ներշնչող Տէրութեան (Աւստրիոյ) օրինակին հետեւելով, այնքարէը կը զարմացնեն Պուլկարիոյ ազատչին (Ռուսիոյ) դէմ իրենց ապերախտութեամբ։ Պուլկար ժողովուրդը չի կրնար մասնակցիլ այնպիսի ընտրութեանց յորս տիրաբար կ'ելնէ գաւազանն, ուր ազգային կամքը բռնակալ կառավարութեան մը կողմէ առաթիւր կը կոխուի անխղճաբար և անամօթաբար։ Պուլկար ժողովուրդն որ քուէէն սրբազան հանգամանքը գիտէ, չի կրնար անպատուել զայն՝ քուէտուփին առջեւ ներկայանալով։ Իրեն համար այդպիսի ընտրութիւնը անվաւեր են և չեղեալ։» Բողոքագիրս ստորագրուած է «Ընդդիմադիր կուսակցութեան գաղտնի մասնախմբին կողմէ»։

Այս բողոքագրով պատուած իրողութիւնը անհիմն չեն բոլորովին։ Մամլոյ և գուսարման ազատութիւն չկայ Պուլկարիոյ մէջ։ Ընտրութիւններն ալ դերձ չեն ճնշումէ։ Պուլկար կառավարութիւնը չուրանար այս բաներս, բայց կ'ըսէ թէ ազէտ և դիւրահաւան ժողովուրդը պաշտպանելու համար ռուսասիրաց հնարքներուն դէմ, անհրաժեշտ է ձեռք առնուլ զգուշութեան միջոցներ, որք լուսաւորեալ երկրի մը մէջ անպէտ և անարդար պիտի լինէին։ Եթէ արդի Կառավարութիւնը տապալի, եթէ անիշխանութիւն տիրէ երկրին մէջ, և հետեւապէս Ռուսիա մէջտեղ, պուլկար ժողովուրդն յաւիտեան կրնայ զրկուիլ իւր իրաւունքներէն իբրեւ ազգ և իբրեւ սահմանադրական պետութիւն։ Այդ մեծագոյն վնասուց առաջն առնելու համար Պ. Մադասլով արդար կը համարի ներկայիս մէջ բիչ մը սեղմել սահմանադրական ազատութիւններն, և այսու ապահովել այժմեան դրութեան պահպանումը։ Բայց բողոքարկուաց պաշտօնագիրն իւր նշանակութիւն ունի։ Ազգը չնորհիւ ընդդիմադիրը և ռուս Կառավարութիւնն յապաղային կարող պիտի լինին մերժել ընտրելի Սոպրանյէին ամէն աբրքը իբրեւ անվաւեր և չեղեալ։

ՌՈՒՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ցարտնի է թէ Ռուսիոյ կրթական նոր օրէնքաց տրամադրութեամբ այսուհետեւ 3 առ հարիւր հրեայ ուսանող միայն իրաւունք ունին համալսարան մտնելու։ Մինչդեռ անկէ առաջ համալսարանի հարիւր ուսանողներէ 25-30ը կրնային հրեաներ լինել։ Սոյն անելանելի կացութեան հանդէպ բազմաթիւ հրեաներ սկսան երթալ եւրոպական համալսարաններ, սակայն նկատելով որ օտար համալսարաններէ եղողները Ռուսիոյ մէջ չեն վայելեր ասպարէզի ազատութիւն, այս պատճառաւ շատ հրեայ ուսանողներ հարկադրուած օրթոդոքսութեան կը դիմեն։ Այսպէս, Նովոյէ Վրէմա կը գրէ թէ Խարկովի մէջ 64 հրեաներ, որ աւարտած էին գիմնազիոնի ընթացքն, օրթոդոքսութիւն ընդունելով կրցան համալսարան մտնել։ Այս միւնոյն երեւոյթը նշմարելի է և Օտեսայի մէջ, ուր հետզհետէ կը բազմանայ օրթոդոքսութեան դիմող հրեայ ուսանողներու թիւն։

—Աւստրիոյ Սլաւներու մի մասի մէջ բուռն փափաք կերեւի զարգանալու ռուսական ոգւով։ Այս նպատակաւ աւստրիական Սլաւները մեծ ջանք ի գործ կը դնեն ռուսական համալսարան բռնելու։ այս առթիւ շատ կ'աշխատի Սլաւենական Նոյեմ—պաւական ժողովուրդ— լրագիրն, որ կ'ապացուցանէ թէ ռուսական համալսարանի մը բացումն յԱւստրիա մեծապէս կարող է նպաստել սլաւական ժողովրդոց գերդային մերձեցման եւ մասնաւորապէս բոլոր Սլաւները սերտիւ կը կապէ Ռուսիոյ հետ։

—Մոսկուայի մէջ ռուս Տիկին մը 50,000 ռուբլի նուիրած է վիրաբուժական հեաց վարժարանի մը կառուցման համար։

—Ցորմէ հետէ հրատարակուեցաւ ռուսական այն օրէնքն որ կը տրամադրէ թէ օտար հպատակներ կը զրկուին Ռուսիոյ մէջ հաստատուն կալուած ունենալէ, բազմաթիւ օտար հպատակներ, որ ընդարձակ կալուածներ ունին ի Ռուսիա, ռուսական հպատակութիւն կը պարտաւորին ընդունիլ։ Այսպիսի անձանց շարքի մէջ կան Գերմանիոյ կամ Աւստրիոյ բարձրատիճան պաշտօնեայներ, որք հրաժարելով իրենց պաշտօններէն կ'երթան և ռուսահպատակ կը լինին։ Այսպէս վերջերս Կոմս Փոդէֆ Պոտոցկի—Դալիչեոյ նախկին փոխարքայի որդին—ընդարձակ կալուածներ ունենալով ի Ռուսիա, հրաժարուեցաւ աւստրիական հպատակութենէ, ռուսական հպատակ լինելու համար։ Կոմս Պոտոցկի բարձրագոյն դիրք ունենալով աւստրիական Պետութեան մէջ, սորա այս որոշումն մեծ յուզում յառաջ բերած է Աւստրիոյ մէջ։ Կարուա-

---

—)(66)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻԼ ՄԱՌԻ

ԹԷՌԷԶ

ՄԱՍՆ ԵՐԻՐՈՐԴ

ՔԻՆԱԼՆԴԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Եւ դառնալով դէպի Դէդուռ, դատաւորն յարեց.

—Կեցէ՛ք, բարեկամս, կ'ուզեմ որ ներկայ գտնուիք այս հարցաքննութեան վախճանին։

Քառորդ ժամ մը յետոյ, Ֆլէսիմոն, որում դատաւորը ժամադրութիւն տուած էր էր գրկիկն մէջ, սենեկին ներս մտաւ։

Ի պատասխանի դատաւորին առաջին հարցմանց, խօսք առաւ.

—Իմ կատարած քննութեանս արդիւնքէն ակներեւ կ'երեւի թէ Նադիվել բաւական հեռուէն սպաննուած է... որովհետեւ եթէ խիստ մօտէն սպաննուած լիներ, վէրքը շրջապատուած կը լինէր վառօղին յատակ բերած սեւ այրուցքէն... Չեմ կրնար ճիշդ որոշել հեռաւորութեան չափը... ժամն յայտնի է... իսկ վէրքը գրեթէ նոյն մեծութիւնն ունի որքան այն բէվվիրը զոր Պ. տը Վոտա այս պահուս ձեռքը բռնած է։

Բոլոր ներկայք զարմացման ընդոստ շարժում մ'ունեցան։

Ժան-Մառգ դժգունեցաւ։

Նոր կնճիռ մը կը նոխատեսէր։

—Գնդակն հանեցի վերքէն, շարունակեց Ֆլէսիմոն, հաղիւ փոխած է իւր ձեւը եւ գիւրաւ կարելի է հանկնալ իւր մեծութիւնն երբ գտնուի ոճրին ծառայած հրացանը...

—Ինչ ըրիք այդ գնդակը։

—Աւասիկ։

Եւ տոքթոր Ֆլէսիմոն մատոյց զայն հարցաքննիչ դատաւորին։

Բոլոր գլուխներն հակեցան եւ այդ պահուն թերեւս երկու ոստիկաններն և գրագիրը միայն անտարբեր կ'երեւէին անցած դարձածին։

Պ. տը Վոտա բէվվիրէն հանած էր փամփուշտներէ մին։ ոստիկաններէն մին գնդակն հանեց պղնձեայ պատեանէն, եւ դատաւորն այսպէս կրցաւ բաղդատել երկու գնդակները։

Իրարու նման էին եւ նոյն մեծութիւնն ունէին, կարելի չէր տարակուսիլ այս մասին։

Եթէ ոճրին ծառայած բէվվիրէն իրենց ակաց առջեւ գտնուող հրացանէ մը չէր, անշուշտ անոր յար եւ նման էր։

Այս յայտնութիւն ծանրակշիռ էր, եւ Դէդէդուռ կոմսն իսկ, այր հանդարտը կ'սէր խախտիլ, տեսակ մը ապշութեամբ կը նայէր Ժան-Մառգի։

Ուրեմն այդ երիտասարդն ստուգիւ մարդասպան մ'էր։

Եւ եթէ այդպէս լինէր, Դէդուռ խղճի նոր խայթ մը չի՞ պիտի ունենար, որովհետեւ իւր պատճառով էր որ Ժան-Մառգ, կենաց գժուարութեանց ճանկն իյնալով, իւր յանդիման ունեցած էր ոճրի գաղափարն եւ անոր գտնուած էր յետս մղելու զայն։

Գաղով Սամսոնի, իւր զայրոյթն ա՛լ չափ ու սահման չունէր։

—Ինչ կ'ուզէք ադկից, կ'ըսէր կերկերեալ ձայնով մը, միթէ գաւառին մէջ նա և ե՞ս միայն ունինք պատերազմի բէվվիրներ... պատերազմէն ի վեր, կարելի է ըսել թէ այդ զէնքերն ամենուն ձեռքն են...

Հարցաքննիչ դատաւորը շարժում մ'ընելու զայն ընդմիջելու համար.

—Այսպէս, Ժան-Մառգ, ըսաւ,—ա՛լ պարոն չէր կոչեր զնա,—կը պնդէ՞ք տակաւին թէ երկար ատենէ ի վեր չէք գործածած այս զէնքը։

—Պատերազմէն վերադառնալէս ի վեր երբէք, ըսաւ երիտասարդն հաստատ ձայնով մը։ Կը պնդեմ ըսածիս վրայ, ինչ որ ալ պատահի։

—Դիտեցէք թէ ձեր ուրացումը կրնայ կորսնցնել զձեզ, որովհետեւ ամենուս համար ակներեւ է—և զինադարձն ալ պիտի ապացուցանէ—թէ մարդ մը գործածած է այս բէվվիրը քանի մը ժամէ ի վեր... եւ փաղն, որ մոխրէն սեւցած է, եւ զոր ժամանակ չէք ունեցան կամ հարկ չէք դատած մաքրելու, ցոյց կուտայ թէ այս գիշեր իսկ պարպուած է գնդակն այր պատեանը միայն մնացած է յատակին մէջ...

—Կը ցաւիմ որ դատական իշխանութիւնն իմ շուրջս կը գտնէ այնպիսի նշաններ զոր կը հատատանն իւր տալը... սակայն կը կրկնեմ առջի խօսքերս...

Դատաւորը քանի մը թուղթեր պարզեց սեղանին վրայ։

Ամէն ոք կը լռէր։ Սամսոն ձեռները կը գաղարեր։ Ժան-Մառգ, գժգոյն եւ խոտաղէմ, տխուր այլ խրոխտ դիրք մ'ունէր։

—Աւասիկ, ըսաւ Պ. տը Վոտա, թուղթի թերթեր որք գտնուած են այս բէվվիրին դրսցէն։ Զէնքն ատոնց տակ ծածկուած էր։ Արդ, այս թուղթերէն մի քանին իրենց վրայ կը կրեն Ժանդի տպագրին խօսքեր բերեր, ինչպէս դիւրին է հասկնալ մասը վրան գրելով։

Եւ դատաւորը Ժան-Մառգի ցոյց տուաւ թուղթերը։

—Ինչ պատասխան ունիք։

—Ձեր գիտցածը միայն։ Կը շարունակեմ ուրացում, եւ ծարելի ու նողկալի կը գտնեմ այս ամբաստանութիւնն, այնքան ծարելի ու նողկալի որ չեմ իսկ ուզեր ինքզինքս պաշտպանել... ինձ անարժան կը գտնեմ զձեզ համոզելու համար ամէն պաշտպանութիւն, ամէն փարձ։

—Սակայն...

—Թոյլ տուէք որ խօսքս լրացնեմ։ Այնուհետեւ ուզածնիգ ըրէք զիս։ Իմ ըսելիքս, աւասիկ։ Դիպուածին տարօրինակ խաղերն՝ թէ անարդ մեքենայութեան մը զոհն եմ, չեմ գիտեր։ Ապառնալիք ըրի Նադիվելի։... իմ սպառնալիքներս չունէին այն իմաստն որ այսօր կը վերագրուի անոնց, այլ անոնց նպատակն էր միայն բռնադատել այդ մարդն որ մեռնելարտի ինձ հետ... կը խոստովանիմ զայս... ապատեցի զնա, երբ տեսայ թէ իմ դրգռմանցս փոխարէն վատութեամբ կը վարուէր... կը խոստովանիմ զայս... Ուխտատեղի անտառին մէջ էի, ոչ հեռու այն տեղէն ուսկից արձակուեցաւ Նադիվելն սպանող գնդակը, դարձեալ կը խոստովանիմ... ամէն բան կը թուի ապացուցանել թէ իմ բէվվիրս գործածուած է ոճրին համար... դիակէն հանուած գնդակը նոյն մեծութիւնն ունի... այս գիշեր իմ բէվվիրս պարպած են, նոր ժանդն ապացոյց մ'է այսմ... կը խոստովանիմ զայս... սակայն ինձ համար դիւրին էր, եթէ յանցաւոր լինէի, դուշակել թէ պիտի գայիք գանել տարձանտին եւ յայտնիմ իմ պաշտպանութիւնս պատրաստել ըսելով թէ կը գործածէի զայն մերթ ընդ մերթ...

—Ձե՛ւ են, ձե՛ւ են ազնիք, մրմնջեց դատաւորը... Մարդ երբ անձին պաշտպանութեան եղանակ մը կ'ընտրէ, մինչեւ վերջը տրամաբանական լինելու է։

—Ձեւ մը չէ այս, տէր դատաւոր, եւ կը յարեմ թէ քանի որ ձեր երեւան հանած յայտնութեանց յետոյ յանցաւոր կը կարծէք զիս, երբէք չեմ նեղանար ձեզ զէմ որ խոտաութեամբ կը վարուիք ինձ հետ. կրնաք ուր կը տանիք զիս եւ ձեր պարտականութիւնն ի գործ կը դնէք մինչեւ վերջն, որքան ալ խիստ լինի այն։

Այս խօսքերը ազատութիւն գործեցին դատաւորին վրայ։

—Բիչ մ'առաջ մ'քննայութեան վրայ խօսեցաք։ Ուրեմն թշնամիներ ունիք։ Եւ ինչ շահ ունէին զձեզ ի կորուստ մատնելով։

Ժան-Մառգ լռեց։

Տարտամ կերպով կը մտաբերէր թէ Գէլման մեռա ունենալու էր այս առաջին մէջ։

Ինչ կերպով։ Չէր գիտեր։

Ով սպաննած էր Նադիվէլն։ Ինչո՞ւ համար։ Գաղտնիք։

Ուստի պատասխան չտուաւ։

—Եթէ թշնամիներ ունիք, տուէ՛ք անոնց անունները։ Եթէ ծածուկ յայտնութիւններ ունիք մեզ ընելիք, պատրաստեմ լսել զայնս եւ օգուտ քաղել անոնցմէ... Մի՛ վարանիք։

Ժան-Մառգ լուռ կը մնար միշտ։

Պ. տը Վոտա ուսերը թափուեց։

—Մի՛ն խօսքեր, ըսաւ մեկուսի, բոլորն ալ ձեւի համար... Այս տղան յանկարծակիի եկաւ եւ այլոց պէս ժամանակ չունեցաւ առասպել մը յերիւրելու։

Այսպէս, իւր հանգուցումը կատարեալ էր։

Ժան-Մառգ լսած էր դատաւորին խօսքերը։

Տխուր ժպիտ մ'ունեցաւ եւ խօսքն ուղղելով Սամսոնի, որ իւր քով կեցած էր։

—Դուն հաւնցո՞ր իմ միտքս, ըսաւ։

—Այ՛, հաւնցայ։

—Ուրեմն քիչ առկ է ազատել զիս, եթէ կարենաս։

—Պիտի ազատե՛մ զքեզ։

(Շարունակելի)

ծական իրաւանց սոյն նոր օրինաց յաջողութիւնը կատարեալ դոհունակութեամբ կը դիտուի ի Ռուսիա, և ռուսական գլխաւոր թերթերը կը ծանուցանեն թէ ներքին գործոց նախարարութիւնը մտադիր է օրէնք մը հրատարակել այդ կարգի նոր հպատակներու համար։

—Ռուս կառավարութեան երևելագոյն վիճակի անմխիթար կացութեան պատճառաւ երևելոց նախարարութիւնն ինչ ինչ միջոցներու դիմեց և կը շարունակէ դիմել պետութեան եկամուտն աւելցնելու դիտաւորութեամբ։ Այդ միջոցներէ ոմանք մերժուեցան իրենց անհեթեթութեան պատճառաւ, իսկ ոմանք ևս ընդունուեցաւ պետական խորհուրդի կողմէ։ Վերջերս ևս դիտաւորութիւն առհասարակ բարձրացնելու բոլոր հարկերն ու տուրքերն։ Ի մէջ այլոց տուրքեր պիտի նշանակուին շատ ըմպելիքներու վրայ, որոնք լոկ առողջապահական տեսակէտով կը գործածուին։ այսպէս տուրքի պիտի ենթարկի լիմոնատն և այլ կազային ըմպելիքներ։ Այս որոշումներ մեծ զայրոյթ յառաջ բերած են ռուսական գրքխաւոր լրագիրներու մէջ։ Նովոյէ, Նովոյէ Վրէմա սաստիկ պարսաւանօք կը խօսին այդ կարգադրութեան դէմ, զոր հակամարդկային ընթացք կը կոչեն։ այսպիսի որոշման գործադրութեամբ բացորոշապէս կ'ապացուցուի թշնամական ընթացքն որ կ'ուղղուի մարդկային առողջապահական միջոցներու դէմ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մէր առած ստոյգ տեղեկութեանց նայելով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր հրաւիրանաց վրայ՝ Քաղաքական ժողովոյ նորընտիր անդամոց ստուար մեծամասնութիւնն ընդունած է ազգային իրեն յանձնուած պաշտօնն և յառաջիկայ շաբաթ առաւօտ Ղալաթիոյ Խորհրդարանը գումարելի նստին ներկայ պիտի գտնուի դիւան կազմելու համար։

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ ընկերակցութեամբ Վսեմ. Մագուտ Սիմոն պէյի՝ երէկ Ելմտական պաշտօնատունն երթալով տեսակցեցաւ Նախարար Վսեմ. Զիւհտի փաշայի հետ եւ յետոյ Բ. Դուռն երթալով մասնաւոր տեսակցութիւն մ'ունեցաւ Արտաքին գործոց Նախարար Վսեմ. Սայիտ փաշայի հետ։

Արտաքին գործոց Հայոց գործերը հայրս մրցկ առաւօտ յատկապէս Փոխանորդարան իջնելով չնորհաւորեց Պատրիարքական Փոխանորդ Իւթիճեան Դեր. Դէորդ Մ. վարդապետի անուան տօնախմբութիւնն և այս առթիւ իւր հայրական օրհնութիւնները տուաւ։

Հայոց Միացեալ Ընկերութիւնք՝ Պ. Յովհաննէս Այվազովսկիի Յոբելեանին առթիւ շաբաթ օրն հեռագիր մ'ուղղելով ի Բեռլսպուրկ, սրտագին շնորհաւորութիւններ ու մաղթանքներ ուղղեցին հայազգի մեծանուն նկարչին։

* * *

Ռոպերդ Քոլէճի հայ ուսանողք ևս հետևեալ հեռագիրն ուղղած են նմա.

«Ռոպերդ Քոլէճի հայ ուսանողութիւնը Ձեր գեղարուեստական գործունէութեան յիսնամեկին առթիւ կը փութայ արտայայտել իւր խորին ըմբանչացումը։»

Պ. Աւետիս Քալանթարեանց, Ռուս կառավարութեանյանձնարարութեամբ, Եւրոպա ուղեւորած է կաթնային տընտեսութիւնն ուսումնասիրելու համար։

Նոյնպէս Ռուսիոյ հանրային կրթութեան նախարարութեան կողմէ Պ. Կարապետ Եղեանց Պրուսէյ կ'երթայ՝ իբր պատուիրակ ներկայ գտնուելու Պերլինոյ մայրաքաղաքին մէջ բացուած Մանկավարժական տիեզերական Համաժողովոյն։

ԱԶԳ

Թաղիս Սբ. Աստուածածին եկեղեցւոյ վարչին Իւսիւտար Իմատիէ Զամբէճեանի Իմատիէ ճառատէսին մահվիւլ դանուած 107, 109, 111, 113, 115, 117 և 119 թիւ ընդ. ամենը 2100 կանգուն ամրոյզ գետնի իւրաքանչիւր կանգունին (3,75) երեք ղրշ. երեսուն փարա գին տուող կայ։

Ուստի ներկայիս կը ծանուցանենք թէ՝ ով որ ամրոյզ 2100 կանգունը յիշեալ գնէն աւելի գնով ծախու առնել կ'ուզէ, թուականէս սկսեալ մինչեւ 8 օր, պարտի Խորհրդոյս դիմել։ սոյն պայմանաժամէն յետոյ պէտք եղած գործողութիւնք վերջնականապէս պիտի կատարուին։

Ի Դիմաց Թաղական Խորհրդոյ

Առենապետ Վ. Ասլանապետ

Մ. ԽԻՏԱՎԱՐՏԵԱՆ Մ. Կ. ԱՅՎԱԶԵԱՆ

1887 Սեպտ. 30

Պէշիկթաշ

1225 1—2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԵՐ

Սերասքիր Զիւլէ գաւառակի գայմագամ անուանեցաւ Սիվրիհիսարի գայմագամ Եուսուֆ Պահրի էֆէնտի։

Նոյն նահանգի Ազիզիյէ գաւառակի գայմագամ անուանեցաւ Զիւլէի գայմագամ Ապտուլլահ պէյ։

Մարզուանի գայմագամ անուանեցաւ Ազիզիյէի գայմագամ Շեվքէդ պէյ։

Տարէնտէի գայմագամ անուանեցաւ Մարզուանի գայմագամ Հաֆըզ Պէքիր էֆէնտի։

Նէքսարի գայմագամ անուանեցաւ Տարէնտէի գայմագամ Հասան Լութֆի էֆէնտի։

Այտընի Ալաչէհիր գաւառակի գայմագամ անուանեցաւ Թիրէի գայմագամ Ալի Ռիզա էֆէնտի և նմա յաջորդեց Ալաչէհիրի գայմագամ Պէշիր էֆէնտի։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐ Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ

Թէև Հաւասի գործակալութիւնն ոչ երէկ և ոչ այսօր չծանոյց Պուլկարիոյ երեսփոխական ընտրութեանց արդիւնքը, սակայն Սոֆոյ-ը հեռաւեալ մասնաւոր հեռագիրն հրատարակած էր երէկ։

ՍՈՖԻԱ, 11 հոկտ. (Ն. Տ.)—Երեսփոխանական ընտրութիւնք կատարուեցան երէկ և այսօր համայն Պուլկարիոյ և Արև. Ռումէլիի մէջ։ Կառավարութիւնը փայլուն յաջողութիւն մ'ունեցաւ։

Պ. Պ. Սդամպուլոֆ և Սդրանչաֆի վերընտրուեցան ի Սոֆիա։

Անկարգութիւնք պատահեցան ի Բլէվնա, Ռահովիձա և Բուդրովիձա ուր՝ օտար գործակալաց միջամտութեան պատճառաւ՝ արիւնահեղ կռիւներ ծագեցան։ Բարեկարգութիւնը վերահաստատուած է։

Արեւ. Ռումէլիի Ցոյնը և Իսլամը չը մասնակցեցան ընտրութեանց։

* * *

Լ. Հէրբլոթ ևս հետեւեալ մասնաւոր հեռագրերն հրատարակած էր իւր երէկի թերթով։

ՍՈՖԻԱ. Երէկ-չէրէն առաւօտ.—Ընտրութեանց ցարդ ծանօթ արդիւնքը կառավարութեան նպաստաւոր կ'երեւի։ Արիւնահեղ կռիւներ տեղի ունեցան ի Բլէվնա (որ Պ. Զանքոֆի ընտրական շրջանակն եղած է միշտ և հետեւաբար կեդրոն ընդդիմադիր կուսակցութեան) ի Բուրլավիձա և Ռահովիձ։ Այս կռիւներն յառաջ բերին օտարոտի մէջտեղը։—Ընտրութիւնը գրեթէ ամբողջովին նպաստաւոր են կառավարութեան։ Բոլոր նախարարք ընտրուեցան շատ մը շրջանակաց մէջ։ Իրաց կացութիւնն յոյժ գոհացուցիչ է։

ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎՔ

Երէկ Արտաքին գործոց պաշտօնատան մէջ յատուկ յանձնաժողով մը գումարեցաւ նախագահութեամբ Վսեմ. Տատեան էֆէնտիի եւ անդամակցութեամբ Անտառաց և հանքաց ընդհանուր տնօրէն Դուլումճեան Վսեմ. Պետրոս էֆէնտիի, Խարիճիլէի մէջդուպճի Բէֆիզ պէյի և ռուսական դեսպանատան երիտասարդ թարգման Պ. Մաքսիմօֆի։ Սոյն յանձնաժողով պաշտօն ունէր քննել այն դատը զոր անտառի խնդրոյ մ'առթիւ յարուցած է Բէրտիրքաքի անուն ռուսահպատակ մը։

—Կրթական նախարարութիւնը նկատելով որ Միլբիլէի երկրորդական վարժարանաց մէջ ֆրանսերէն լեզուն պահանջուած եղանակաւ չաւանդուիր, յանձնաժողով մը կազմած էր որպէսզի ծրագիր մը պատրաստէ, հետեւելով Եւրոպիոյ մէջ ի գործ ածուած ուսուցման եղանակին։ Արդ, սոյն յանձնաժողով, զոր կը կազմեն Մէարիֆի բարձրագոյն ժողովոյ անդամ Աբիսթոքլէս էֆէնտի, զինուորական վարժարանի ֆրանսերէնի նախորդ ուսուցիչ Թէրզեան Թովմաս էֆէնտի և այլ մէկ քանի հմուտ անձինք, անցեալ կիրակի օր իւր պաշտօնն աւարտեց և տեղեկագիրը պիտի մատուցանէ Կրթական նախարարութեան։

ԻՏԱԼԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ

Մայրաքաղաքիս իտալական դեսպանն, Պառոն Պլան, որ ահագին հարստութեան տէր անձ մ'է, մտադիր է իւր անձնական ծախիւք հոյակապ դեսպանատուն մը կառուցանել տալ ի Բերա, Այաս-Փաշա, Գերմանական դեսպանատան հանդէպ։ Ապագային մէջ եթէ իւր կառավարութիւնն հաւանի, Պառոն Պլան նմա պիտի թողու այդ շէնքն։ Իտալական դեսպանն արդէն ձեռնարկած է իւր խորհուրդի իրականացման, գնելով գերմանական դեսպանատան հանդէպ գտնուած տուներէ շատերն։

Պառոն Պլան որ տակաւին Թրապոյոյ ամբանոցը կը գտնուի, Բերա վերադարձին տուն մը պիտի վարձէ ուր պիտի բնակի առժամապէս ցչնութիւն նոր դեսպանատան։ Այդ պարագային մէջ, հիւպատոսարանը պիտի փոխադրուի ի Թէվֆէ-Պաշի, այն շէնքին մէջ որ դեսպանատան կը ծառայէ այժմ։

ՎԵՐԱԴԱՐՁ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՕԵԳԻՊՏՈՍ

Ցաս. «Ալէքսանդրէ իւր սեպտ. 18/30 թուոյն մէջ հետեւեալ կերպիւ կը նկարագրէ Բարձր. Նուպար փաշայի ժամանումն յեգիպտոս։

«Նախարարապետ և Արտաքին գործոց ու Դատական նախարար Նուպար փաշա այս առաւօտ ատ հասաւ։ Մեսաժբրիի Օ«էս» շոգենաւն ուր կը գտնուէր Ն. Բարձրութիւն՝ հազիւ կանգ առած էր նաւահանգստին մէջ՝ երբ արտաքին գործոց նախարարի խորհրդական Տիգրան փաշա, քաղաքիս կառավարիչ Օսման փաշա Օրֆի և նախարարաց խորհրդոյ քարտուղար Խալիլ փաշա շոգենաւ դնացին նախարարապետն ողջունելու և բարի գալուստ մաղթելու համար։ Դոհացուցիչ էր տեսնել որ, հակառակ ծովային ճանապարհութեան հոգնութիւններուն, Նուպար փաշա քաջառողջ դէմք մ'ունէր, ուսկից կ'երևի թէ յեբրպա և Քարլսպատի ջերմուկներն ուղեւորիլը մեծապէս նպաստած են Ն. Բարձրութեան առողջութեան։

«Նուպար փաշա ցամաք եղնելով կառավարչի կառքը բաղմեցաւ եւ իրեն ընդառաջ եկող անձանց ուղեկցութեամբ ուղղակի Վսեմ. Թաքուր փաշա Ցակոբեանի բնակարանը դնաց եւ անդ կառավարի մեկնման ժամուն սպասեց վասն զի որոշած էր անմիջապէս Դահիրէ երթալ անտի Բարձր. Խտիվին ընկերանալու համար ի Վերին Եգիպտոս։ Այն անձանց մէջ որք երկաթուղոյ կայարանը կ'սպասէին նախարարապետն ողջունելու համար, կը նշմարուէին, Բէյլիզեան Կարապետ եւ Արթին պէյերը, Պ. Պ. Ամպրուազ Սինանոսն, Կապրիէլ Զօկէպ, Սրբ Զէրվիտարի, Ցակոբեան, Իպրահիմ պէյ, քաղաքիս դատարանի նախագահը բազմաթիւ դատաւորք, Սապա պէյ, եւ այլք։ Ներկայից հետ հակիրճ տեսակցութենէ մը յետոյ, Նուպար փաշա շոգեկառք նստաւ, հետն ունենալով Վսեմ. Տիգրան փաշան, Վսեմ. Թաքուր փաշան եւ Պ. Ամպրուազ Սինանոսն։

«Նուպար փաշա այսօր միջօրէէն երկու ժամ յետոյ Դահիրէ հասած լինելու է, ուր քանի մը վայրկեան կենալէ յետոյ մտադիր է դէպ ի Ասիուդ ուղեւորիլ Բարձր. Խտիվին ընկերանալու համար։»

ՍՈՓՈՍԱՐ ՀԱՐՑԱԶԱՏ

Հետեւեալ հանգանակութիւնք եղած են ի նպաստ Սկիւտարի հրկիզեալոց։

	Ղրշ.
Գումար նախորդ ցուցակին	434,221
Բարձր. Այրէ սարի փաշա	1,000
Վսեմ. Հալիմ փաշա	5,000
Պաշտօնեայք ջրի ընկերութեան	1,080
Վսեմ. Մագուտ Սիմոն պէյ	500
Հայերէն թերթի մը մէկ օրուան հասոյթը	555
Գուրպան Պարեանի ա. թիւ բարեսէր անձանց ոմանց կողմէ վաճառուած ոչխարի մորթերու հասոյթէ	242
Գումար	462,198

Վեհ. Սուլթանին հրամանաւ տասն հինգ տարուան մենաշնորհ տրուեցաւ Պետական Խորհրդոյ Օրէնսդիր ճիւղին անդամ Ապտուլլահ պէյի և սաւնական անդամ Շիւքրի պէյի որք սառուցի գործարան մը պիտի հաստատեն Զմիւռնիոյ մէջ։

—Եկեղեցական նախարարութիւնն՝ որոշմամբ Պետական Խորհրդոյ՝ ծանոյց առ որ անկ է թէ դրօշմաթուղթի տուրքէ ազատ պիտի մնան պաշտօնէից կողմէ տրուած հրաժարման և արձակուրդ խնդրելու աղերսագիրը ինչպէս նաև անոնց օգտափոխութեան, բժշկական խնամոց և հանգստեան թոշակի կարօտ լինելու առթիւ տրուած տեղեկագիրը։

—Նախընթաց գիշեր կայս. պարատան մէջ ի պատիւ Սրբ Զարլզի Տիլբի տրուած հացկերոյթի միջոցին Վեհ. Սուլթանը ծխախոտի ծանրագին տուփ մը նուիրեց նմա։

—Վեհ. Սուլթանին հրամանաւ՝ բոլոր զօրանոցաց մէջ գտնուող այն զինուորք որք 1298 թուականին ծառայութեան մտած են, պիտի արձակուին։ Կայս. սոյն հրամանի համաձայն Սպարապետի Դուռը ծանոյց առ որ անկ է որ այդ կարգի 'զինուորք արձակուելով իրենց հայրենիքները ղրկուին։

—Զինուորական ընտիր ցանցնաժողովոյ դեր-նախագահ Իսմայիլ Հագը փաշա երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին և Արտաքին գործոց Վսեմ. նախարարին հետ։

—Մայրաքաղաքիս լրագրաց ոմանք վերջերս ծանուցած էին թէ Ռուսճուքի հելլենական հիւպատոս Պ. Զիկօմայա անարգուած է պուլկարական իշխանութեանց կողմէ։ Այս առթիւ Աթէնքէն հետեւեալը կը գրեն առ Նեոլոգոս.

«Որչափ որ դիտենք այս լուր անհիմն է. ընդհակառակն, տեղւոյս կէս-պաշտօնական լրագրաց խօսքին նայելով պուլկար իշխանութիւնք Ֆերտինանտ իշխանին Սոֆիա ժամանելէն ի վեր առաջուընէ աւելի մարդասիրաբար կը վարուին հելլէն հպատակաց հետ։»

—Երկուան Լ. Հ բբլոյի մէջ կը կարդանք։

Վերջերս Աթէնքի մէջ դրիպ մը հիմնուեցաւ Պալքանեան թերակղզւոյն փոքր պետութեանց միջեւ դաշնակցութեան մը գաղափարը ծաւալելու համար։ Սորա անդամոց մէջ՝ Պ. Լէոնիտաս Պիւլկարիս՝ նամակաւ մը դիմած էր առ Պ. Սդոյանոֆ, դեր նախագահ նախորդ Սոպրանիլէին, այս գաղափարին առաւելութիւնները բացատրելու համար։ Աթէնքի Ամէն. լրագիրն հրատարակած է պատասխանն Պ. Սդոյանոֆի, որ կը յայտարարէ թէ Պուլկարիոյ բոլոր խելացի մարդիկն համաձայն են թէ պալքանեան դաշնակցութեան մը հաստատումն իբր միակ միջոց կը նկատեն փրկելու համար ազգային գոյութիւնն Յունաստանի, Ռումանիոյ, Սերպիոյ եւ Պուլկարիոյ, որք առանց այդմ, վաղ կամ անագան պիտի դրաւուին իրենց դրացի պետութեանց կողմէ, յանուն քաղաքակրթութեան եւ յառաջդիմութեան։ Այդ գաղափարի իրականացումն երկար ժամանակէ հետէ վերջ մը տուած պիտի լինէր այն տագնապն յոր կը տառապի Պուլկարիա, մինչդեռ այժմ այդ երկիր խաղալիկ եղած է տերութեանց յայտարարութիւններուն։ Պ. Սդոյանոֆ կը յայտնէ թէ այս գաղափարին գլխաւոր հակառակողը պիտի լինի Ռուսիա, վասն զի այդպիսի դաշնակցութիւն մը միայն կարող է մաքառիլ նորա «օրթոտոքսութեան, սլավականութեան եւ նորա փրկարարի պաշտօնին» դէմ մինչդեռ Աստրիա իրեն նպաստաւոր պիտի գտնէ անոր իրականացումն եւ Մաճարաց հաւանութիւնը կանխաւ առնուած է։

—Վեհ. Սուլթանին հրամանաւ, Թօփ-դարուի պալատան մէջ գտնուած կայս. Թանդարանի ծառայող Զինիլի Բէյօղլին դէմ ընդարձակ և հոյակապ շէնք մը շինուիլ սկսած է ուր պիտի դրուին այն հնութիւնք զորս Թանգարանի տնօրէն Հատի պէյ Սայտանն բերած է։

—Ռուսական դեսպան Պ. Նէլիտոֆ մայրաքաղաքս վերադարձած օրը, երկուշաբթի, Բ. Դուռն երթալով այցելութիւն տուաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին, ներքին և արտաքին գործոց Վսեմ. նախարարներուն և Վսեմ. Ցարութիւն էֆէնտի Ծատեասը։

—Դատական Նախարարութիւնն հրահանգ տուաւ դատական իշխանութեանց որ հիւպատոսաց կողմէ տրուած վկայականները բաւական համարին օտար հպատակութիւն մը հաստատուած նկատելու համար։

—Մախսուսէի վարչութիւնը խիստ հրամաններ տուաւ իւր շոգենաւուց նաւապետներուն որպէս զի աչալրջ հսկողութիւն ընեն որ հիւսիսային Ափրիկէի նաւահանգիստները գերիներ չի փոխադրուին, վասն զի կ'երևի թէ տակաւին այդ առեւտրով զբաղողներ կը գտնուին եղեր։

—Սուրիոյ կուսակալ Նաշիտ փաշա նահանգին այլ և այլ կողմերը պտոյտ մ'ընել սկսեր է։ Ն. Վսեմութիւն սեպտ. 17 ին մեկներ է Պէրութէն Աբուտ շոգենաւով Սայիտա և անտի Աքիա երթալու համար։

—Բեռլբսպուրկի լրագիրը կը ծանուցանեն թէ Պաղեստինու յունական ընկերութիւնն որոշեր է 450 ուխտաւոր պարունակելու չափ ընդարձակ նոր շէնք մը կառուցանել Երուսաղեմայ յունաց վանքին հողերուն վրայ։ Այդ շէնքին պիտի կցուին ռուսական փուռ մը և խնայողական ճաշարան մը։

—Հելլենական կառավարութիւնն հեռագրաւ ծանուցած է ի Սելանիկ թէ այն աւազակապետն որ յուլիս ամսոյն մէջ Քասդորիայի երեւելիներէն Թէօտոր Սբուտարի անուն անձը գերի բռնած էր, ձերբակալուեր է։ Հեռագիրը կը հրաւիրէ այդ աւազակին վրնասեալ անձինքն Աթէնք երթալ և հաստատել նորա իսկութիւնն, ըստ որում աւազակապետն հելլենական հիպատակ լինելով, տեղւոյն դատարանաց առջեւ պիտի դատուի։

—Ասասիկ անուանքն այն թուրք սպրոյից, որք Գերմանիոյ բանակաց մէջ ծառայած են և վաղը մայրաքաղաքս կը հասնին՝ ընկերակցութեամբ սպայակոյտի հաղարապետ Շաբիր պէյի։

Թնդանօթագիք.—Դեր-հաղարապետ Մէհմէտ Շիւքրի էֆէնտի, որ ի Գերմանիա անձնապահ զօրաց դնդին մէջ տեղակալի աստիճան ունեցած է։ Հարիւրապետ Ալի Ռիզա էֆէնտի, որ ի Գերմանիա տեղակալի աստիճան ունեցած է։ Հարիւրապետ Եաղուպ Վասֆի էֆէնտի, որ ի Գերմանիա նոյնպէս տեղակալի պաշտօն ունեցած է։

Ամրաշինք.—Հարիւրապետ Ռիզա էֆէնտի, տեղակալ ի Գերմանիա։

Հեռագրաք.—Տեղակալ Նաբի, Հիլմի եւ Բահմի էֆէնտիք՝ նոյնպէս տեղակալ ի Գերմանիա։

Հեծելաք.—Տեղակալ Մէհմէտ Ֆարիզ, Ալի Ռիզա եւ Մէհմէտ Ալի էֆէնտիք նոյնպէս տեղակալ ի Գերմանիա։

Ասոնցմէ սպայակոյտի դեր-հաղարապետ Թէվֆիկ պէյ միայն ժամանակ մը Գերմանիա պիտի մնայ իւր ուսումը կատարելագործելու համար։

—Միտիլլի մէջ Վուրնազօ անուն յոյն մը անժառանգ մեռնելով իւր ութսուն հազար ոսկւոյ հարստութեան մէկ մասը իւր մօրը և միւս մասն ալ կղզւոյն յոյն վարժարանաց եւ հիւանդանոցին կտակեր է։

—Անտառաց հրկիզման պատճառներէն մին ալ սա է թէ, կրսէ Հաֆէզաֆ, անտառաց պաշտօնեայք արած ծառերու կոճղերը գիւղացւոց կուտան իբր վառելափայտ, որով այս վերջինք վարժուելով անտառները կը հրդեհեն ձմեռուան փայտ ճարելու համար։

—Գերմանական հիւպատոսարանի գլխաւոր պաշտօնեայներէ ոմանք երեկ Իֆէպօլուի ճամբով Էնկիւրի ուղեւորեցան զբօսական պտոյտ մ'ընելու համար։

—Վեհ. Սուլթանին բարձր հովանաւորութեան ներքեւ գտնուող Պէշիքթաշի Համիտիյէ վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէս, տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի, 4 հոկտեմբեր, ժամ 4 ½ ին։

—Գալատայի կրթական նարդնամբ տնօրէն Թահսին պէյ երէկ իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ։

—Ինչպէս արդէն ծանուցուեցաւ, Պետական Խորհրդոյ որոշմամբ՝ ստոիկանութիւնն սկսած է փակել հակառակ օրինաց բացուած բոլոր դինեատուներն։

—Երէկ մայրաքաղաքս ժամանեցին Սերլանիկի մաքսատան նախորդ տնօրէն Հաճի Սիւլէյման պէյ և Տրապիզոնի նախորդ տէֆթէրտար, Ճէմալ պէյ։

—Սպարապետի Դրան հաղարապետութեան մէջ գտնուող Ֆէրիզ Հասան Բիւչիսի փաշա քանի մ'օրէ ի վեր հիւանդ լինելով իւր պաշտօնատեղին չի յաճախէր։

—Սուրիս, նահանգին մէջ գտնուող Հիւսէյին Հիլմի էֆէնտի, որ արձակուրդով մայրաքաղաքս կը գտնուէր, երէկ իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ։

—Աթէնքի օսմ. դեսպան Ֆէրիտուն պէյի ծանուցեալ արիաձի մասին կատարուած քննութեանց արդիւնքն յայտնուած չէ տակաւին։ Ամբաստանեալ անձինք՝ Պ. Պ. Քանգուրի, Աքալիերի և Դէլսինէսի՝ հակառակ իրենց բողոքանաց բանը կը գտնուին տակաւին Ֆէրիտուն պէյ յայտարարած լինելով Աթէնքի ոստիկանութեան տնօրէնին թէ համոզուած է որ այդ անձանց նպատակն էր սպառնալեօք դրամ կորզել իրմէ, ընդհ. դատախազն այդ մասին դատ պիտի բանայ անոնց դէմ, պատժական ատենին առջեւ։

—Կիրակի գիշեր ժամը 4 ին Սարայ Պուրնուի առջեւ հելլենական շոգենաւ մը նաւակի մը զարնուելով խորտակեց զայն։ Նաւակին մէջ գտնուող հինգ անձինք ՝ ոտիկան մ'ոստիկան, ոսկերչ ՝ սոն պահուն անցնող ուրիշ նաւակ մը օգնութեան հասնելով ազատ'ց զանոնք։

ԱԶԳ ԱՐԵՒ. ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ ԸՆԿ.

Բումէլիի երկաթուղեայ ընդհ. Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել հասարակութեան թէ ստորագրեալ թուականէն սկսեալ և մինչեւ ցնոր տնօրինութիւն, «Մրրանիի և ուրիշ կուսերու» (մանրած թէ ոչ) մասնակի առաքումները պիտի ընդունուին թիւ 22 Ա. Մասնաւոր սակագնոյն պայմաններով, այսինքն Փոքր Արագութեան ընդհանուր Սակագնոյն Ա. աստիճանին գնով երբ Մեծ Արագութեամբ կատարուին, և նոյն սակագնոյն Բ. աստիճանին գնով երբ Փոքր Արագութեամբ կատարուին։

ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 3 հոկտ. 1887

Հայերէն լեզուաւ կանոնաւոր տետրակ բանել, և քիչ մ'ալ գաղղերէն կարդալ եւ գրել գիտցող երիտասարդ մը կ'ուզուի առեւտրական տան մը քով ծառայելու համար։ պէտք է դիմել, Պահչէ Գարու Բասիմ բաշա խան թիւ 7։

1221 3—15

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱՃԱՌՆՍ ՀԱՎԱՍ

Մարսիլիա, 11 հոկտ.

Մարէլ ի ընկերութեան էրէ (.°) շոգենաւը ներեր է Իէլեան կղզեաց մօտ. 23 հոգի խեղդուեր են։

Իսմայիլիա, 11 հոկտ.

Հոկտ. 1էն մինչեւ 10 Սուէզի ջրանցէն անցնող նաւուց թիւն է 63 և տասնօրեայ հասոյթն 1,480,000 ֆրանք։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 30 Սեպտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԴՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	110 3/8
3 » » » (վճռելիին)	110 1/4
3 » Բարիզի » (պանքայի)	22 90
3 » » » (վճռելիին)	22 97 1/2

Օսմանեան Բոնսօլիտէ

	Դահեկան
Երէկ երեկոյ գոց. (Միայ. Սէրի Գ. Կ.	15 14
Պարտքային գոցուելէն վերջը » »	15 13
Բերսայի մէջ » »	— —
Առաւօտուն բացուելեայ » »	15 13
Բարձրագոյն գին » »	15 13 1/2
Նուազագոյն » »	15 13
Կէս օրին » »	15 13 1/2

ԻՍԹԹԳԻՐԱՁԸ ՏԱՏԻԼԻ

Երէկ երեկոյ	37 4
Այս առաւօտ	36 38
Կէս օր	36 38

ԸՆԹԱՑՔ ԱՐՔԻԹԵՊԼԹՈՅ

Փոխառութիւն 1858	Սէրի	21	30
» 1862)			
» 1860)			
» 1863) B	»	14	5
» 1872)			
» 1865)			
» 1869) C	»	0	15 13
» 1873)			

ԲԱՆԿԱՆԵՏՈՒՄԻՆ

Օսմանեան Լիմիթէդ	Ա.Գդ. Լ.	4	4
Քրէտիտ Լիոնէ	Գ. Կ. Օսմ.	6	30
Պանք տը Դօնս	»	5	30
Սօս. Ֆոնտ է Ֆրանսէ	»	3	25
Թրամուէյ	»	332	1/2
Բումէլի երկաթուղի	Ֆր.	34	50
Ոսկերչական տէ Բրիսորիմէ	»	—	
Բանկեր Լաբրիսմի	»	95	

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի	ՊՂ.	100
Օ Ֆրանքոց	»	87 38
Անգլիական ոսկի	»	110 37
Բոլ. Իմպերիալ	»	90 30
Քրանդ	»	51 15
Ռուպլի թղթադրամ	»	10 8
» արծաթի	»	76
Ցիւրիխ	»	— —
Մէճ. արծ. (տարբ.)	»	108 16
Վիէննոյ	»	103
Հինգնոյ	»	103
Մէհմատիէ	»	98
Թասֆիրէ	»	15 10

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 11 հոկտ. ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. բանասիրատ	102	3/16
Օսմ. » Սէրի Դ. բացուելեայ	13	3/4
» » » գոցուելեայ	13	11/16
» » » Ա.	21	1/2
» » » Բ.	14	
» » » Գ.	13	3/8
Օթոման 1871	(.°.) 72	1/4
Փոխառութիւն 1877	84	3/8
Պանք Օթոման	9	3/8
Ռուսական փոխառ. 1873	95	
Եգիպտական միացեալ (իւռնիֆիէ)	74	3/4
» առանձն. (բրիվիլէժիէ)	99	1/4
Տպրա Պանիէ	71	7/8
Տօմանիալ (փոխառ. Լօչիրտ)	(.°.) 94	3/4
Հունգարական պարտամուրհակ 4 %	—	—
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25	574

Վիէննա, 11 հոկտ. ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	125	70
Օսմանեան երկաթուղի	17	10

Բարիզ, 11 հոկտ. ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Լիանթի 4 1/2 %	109	30
» » 3 %	82	22 1/2
Օսմանեան բանսօլիտէ Սէրի Դ. բացուելեայ	13	97 1/2
» » » գոցուելեայ	13	95
» » » Բ.	—	
» » » Գ.	—	
Օսմանեան երկաթուղի	34	75
» Իէվիի բաժնեթղթեր	—	—
Պանք Օթոման	497	50
Դրէտիտ Լիոնէ	572	50
» Ֆոնսիէ	1402	50
Բանքեռոսմն Լիոնի	1267	50
Սուէզի ջրանցք	2015	
Ռուսական 5 % 1877 թ.	99	3/4
Իտալական Լիանթի	98	80
Սպանիական (արտաքին)	67	1/2
Եգիպտական միացեալ	382	50
Բրիսորիմէ թուղթ	357	50
5 % Հելլենական	343	75
Զէր Լոնտրայի վրայ	25	40

Բարիզ, 11 հոկտ. ժ. 10 և 30 երեկոյ

Ֆրանսական Լիանթի 4 1/2 %	—	—
Օսմանեան բանսօլիտէ	գործ չկայ	
Եգիպտական	382	50

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԶՄԻՒՐՆԻՆ, 26 Սեպտ.

Արեւելք լրագրի 1094 թուով հրատարակուած Հանրագրին մէջ կարդացինք հետեւեալ պարբերութիւնները.

1. «Այսպէս երկու տարիէ ի վեր չունինք Տնտեսական Խորհուրդ, որու պաշտօնն յանձնուած է Քաղ. Ժողովին՝ հակառակ օրէնքի»։

2. «Տարիներ առաջ գոյացած ազգային արկղի մեծագումար պարտք մը, թէև Ս. Առաջնորդին քաղաքս դալէն յառաջ իմաստուն և ինայողական կարգադրութիւններով տարուէ տարի կը նուազի, սակայն իւր պաշտօնավարութեան ժամանակ նորէն կ'սկսի բարձրանալ և գրեթէ 4000 ոսկիէն 7000ի կը հասնի»։

3. «Ազգին սեպհականութիւնն կրած կորուածներ կը վաճառուին, առանց Պատկ. Վարչութեանդ ծանուցուելու, ինչպէս որ օրէնքն է։ Ազգային կորուածներ կը փլուին, կ'աւերուին, բայց անոնց նորոգութեան հոգ չտարուիր»։

Սոյն երեք պարբերութիւնք անշուշտ քննադատութիւն են ոչ միայն տասնամեայ շրջանի մը, այլ նոյն իսկ հրաժարեալ Քաղ. Ժողովոյս պաշտօնավարութեան, զոր վերջերս լրացնելով, Պատկ. Դաւառ

ոսկի էր, այլ 5839. տե՛ս Տեղեկագիր 1877—78, երես 10։ Սոյն տասնամեայ շրջանին մէջ կատարուած Նորոգ շինութեանց ծախքերն 2205 ոսկի, բարձելով կ'ունենանք 8044 ոսկի, յորմէ իջնելով այժմեան պարտք 7038 ոսկին, տարբերութիւնն 1006 ոսկի ազգային պարտուց գումարէն իջած լինելն յայտնի կ'երևի։

3. Ազգին կալուածները սոյն տասնամեայ շրջանին մէջ ոչ միայն չեն վաճառուած, և չեն աւերուած, այլ նորանոր շինութիւններ իսկ կատարուած են՝ խարխուլ կալուածները վերաշինուելով, և այրած չէնքերը կամ անչէն գետիններն այնպիսի փառաւոր շինուած են որ բնաւ եկամուտ չբերող կամ աննշան գումար մը բերող կալուածները շահագործուելով, այսօր առատ եկամուտը կը բերեն։

Ահաւասիկ նորաչէն կալուածոց ցուցակն։

	Ծախք Եկեղեցի.	Ծախք Դպրոց
Մոմճի խան	2400	470
Սահիլիէ փողոց պանդոկ	1200	216
Փէչտրմաճքլար փող. սրճար.	750	283
Սահիլիէ փողոց մթերանոց	1900	270
Մահմուտիյէ փող. 2 մթեր.	550	150
Առաջնորդ. դիմաց սրճար.	540	180
Բէշլիտէ գեղարան ընդարձ.	270	54
Մարգաքիի կողմը տնակ մը	130	30
	7740	1653

Հռիփ. դպրոցի ճանճնաժող.

պարտք վճարեալ	3300
Հիւանդանոցի մէջ 5 սենեկաց շինութիւն	870
	11910

Որ է 2205 լիրա.

Արդ՝ վերոնշանեալ նորոգ շինութիւնը, պարտուց վճարմունք և կալուածոց շահագործութիւնք կատարուած են վերջին տասնամեայ շրջանի Տնտեսականաց ուշիմ և գործունի մատակարարութեան շնորհիւ, որք և հարկ եղած ժամանակ իրենց բսակէն 1000 ոսկի գումարով օժանդակած են ազգային արկղին, որով և ազգային վարկը բարձրացնելով, նախանձելի դրութեան մէջ դրած են։ Այսպէս յայտնի ճշմարտութեան հանդէպ ժողովուրդն և ժողովներն երախտագիտութեամբ թախանձելով խնդրած են որ շարունակեն Տնտեսականք իրենց պաշտօնն, ամեն երկամեայ շրջանի հրաժարմանց առթիւ։

Իրաւ է որ Հռիփ. վարժարանի շինութեան ծախքը գոցելու համար գաւառական ժողովն մի քանի անպէտ կալուածներու վաճառումն որոշած էր։ Բայց Ճանճնաժողովն չկարենալով պատշաճաւոր գին գտնել՝ չվաճառեց զայնս՝ և պարտուց ներքեւ մնաց։ Իսկ Ազգ. Վարչութիւնն իւր իմաստուն տնտեսութեամբ կարող եղաւ վճարել յիշեալ պարտքն ինչպէս վերը նշանակեցինք, որով և վաճառուելու համար որոշուած կալուածները դարձեալ մնացին Ազգին, իբր թէ՝ նորէն գնոյ առնուեցան։

